ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հուլիսի 22-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ԿՄՆՀ-ՀԲՄԾՁԲ-25/3**

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքի,Զովունի,Պառոշյան,Քասախ բնակավայրերի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «**ԿՄՆՀ-ՀԲՄԾՁԲ-25/3**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **24.07.2025թ.** ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ **25.07.2025թ.** տրամադրված պարզաբանումը՝

Հարցում

Հարգելի գործընկեր

Խնդրում ենք պարզաբանել <<**ԿՄՆՀ-ՀԲՄԾՁԲ-25/3**>> ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված **«Եղվարդ քաղաքի,Զովունի, Պառոշյան, Քասախ բնակավայրերի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն»**-ների համար պահանջվող՝ «Ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա)» լիցենզիայի ներդիրի անհրաժեշտությունը: Հաշվի առնելով , որ վերոնշյալ 1-ին չափաբաժինը վերաբերվում է ճանապարհների ասֆալտապատմանը, իսկ «Տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն)(01.09)» ներդիրը ամբողջությամբ բավարար է նշված ծառայությունների մատուցման համար:

Պատասխան

Հարգելի գործընկեր

Ձեր կողմից նշված լիցենզիայի ներդիրի պահանջն ի հայտ է եկել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված որոշ հասցեների փողոցների վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքների ժամանակ կարող են ի հայտ գալ ջրագծեր /երբեմն ապօրինի միացումներով/, որոնք էլ անհրաժեշտություն է առաջանում ապամոնտաժել և նոր շարունակել աշխատանքները, այդ իսկ պատճառով նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս անհրաժեշտ է նախատեսել և հաշվի առնել նշված հանգամանքները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<**ԿՄՆՀ-ՀԲՄԾՁԲ-25/3**>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝

Մ.Պապյանին:

Հեռախոս՝ **098 11 88 00**:

Էլեկտրանային փոստ՝ **mher-papyan@mail.ru**

<<**ԿՄՆՀ-ՀԲՄԾՁԲ-25/3**>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով